ՏԵՂԵԿԱՆՔ
«ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀՈԴՎԱԾ 11. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թափոնների գործածության ոլորտում համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում՝

ա) իրականացնում է հսկողություն աղբահանման նկատմամբ.

բ) կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները.

գ) իրականացնում է չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).

դ) կազմակերպում է ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը.

ե) աջակցում է համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանը:

2. Թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով ~~«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով~~ սահմանված այլ իրավասություններ:

(11-րդ հոդվածը լրաց. 22.05.18 ՀՕ-329-Ն)